

**ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե**

**Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 4/6**

**19 ապրիլի 2016 թ.**

Քննարկվեց Ա/Ձ Արտակ Ավետիսյանի 21.03.2016թ-ի գանգատը ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ 14.03.2016թ-ի թիվ 5103196 ակտի դեմ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ֆինանսների նախարարի 02.02.2016թ-ի թիվ 5103196 հանձնարարագրի համաձայն Ա/Ձ Արտակ Ավետիսյանի մոտ կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում, կազմվել է ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ 14.03.2016թ-ի թիվ 5103196 ակտը (այսուհետ նաև Ակտ), որով ՀՀ կառավարության 26.03.2015թ-ի թիվ 379-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնները խախտելու համար կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված տուգանքը՝ գումարով 600.000 դրամ:

Տվյալ դեպքում, Ակտով առաջադրված տուգանքի չափը որոշելու համար հիմք է հանդիսացել այն հանգամանքը, որ վերոգրյալ խախտումը մեկ տարվա ընթացքում կրկնվել է երկրորդ անգամ: Մասնավորապես, առաջին խախտումն արձանագրվել է 14.08.2015թ-ի թիվ 6113987 ակտով, իսկ երկրորդը՝ 21.10.2015թ-ի թիվ 5102339 ակտով:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ 21.10.2015թ-ի թիվ 5102339 ակտը Ա/Ձ Արտակ Ավետիսյանի կողմից բողոքարկվել է դատական կարգով: Ընդ որում, գործում առկա է ՀՀ վարչական դատարանի 29.02.2016թ-ի թիվ ՎԴ/6070/05/15 վճիռը, որով 21.10.2015թ-ի թիվ 5102339 ակտը ճանաչվել է անվավեր: Պարզվեց նաև, որ նշված վճիռը սահմանված կարգով բողոքարկվել է:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի ա) ենթակետի համաձայն. «Վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե՝ ա) անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը»:

Քննարկվող դեպքում հաշվի առնելով, որ Ակտով առաջադրված տուգանքի չափը որոշելու համար հիմք հանդիսացած 21.10.2015թ-ի թիվ 5102339 ակտի իրավաչափության հարցը վիճարկվում է դատական կարգով, ուստի մինչև թիվ ՎԴ/6070/05/15 գործով վերջնական դատական ակտի ընդունումը տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումն անհնարին է:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի ա) ենթակետի դրույթներով՝ Հանձնաժողովը գտնում է, որ Ա/Ձ Արտակ Ավետիսյանի գանգատի

հիման վրա հարուցված վարչական վարույթը ենթակա է կասեցման՝ մինչև թիվ ՎԴ/6070/05/15 գործով վերջնական դատական ակտի ընդունումը:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

### ո ղ ջ ու մ է՝

Ա/2 Արտակ Ավետիսյանի 21.03.2016թ-ի գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը կասեցնել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



ՎԱԿԻՐՈՒՄՅԱՆ